ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

08.05.2026 թվականին կնքված N ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-26/2-2 գնման պայմանագրի

ք. Երևան «13» մայիսի 2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Չուլյանի, որը գործում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՍԱՐԳՍՅԱՆ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է «ՍԱՐԳՍՅԱՆ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 08.05.2026թ.-ին կնքված N ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-26/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը և Վաճառողի կողմից 12.05.2026թ.-ին Գնորդին ներկայացրած ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգելու մասին գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Գնման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել և սահմանել մինչև սույն թվականի հունիսի 27-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ	«ՍԱՐԳՍՅԱՆ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան փող. 72	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա, 63
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900018001538	Հ/Հ՝ 11815004507800
ՀՎՀՀ՝ 01506092	ՀՎՀՀ՝ 02547465
Տնօրեն՝ Ա. Չուլյան	Տնօրեն՝ Ա. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ